ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 հունվարի 2014 թվականի N 3-Ա

ք. Հրազդան

Ռ. ԵՓՐԵՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ հոդվածների և 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Զովաշենի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար ***Ռիմա Եփրեմյանին*** տրամադրել 2014 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդից տաս աշխատանքային օր՝ 2014 թվականի փետրվարի 11-ից մինչև 2014 թվականի փետրվարի 24-ը ներառյալ:

Հիմք՝ ***Ռ. Եփրեմյանի*** անձնական դիմումը:

2. ***Ռիմա Եփրեմյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Զովաշենի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ռուսաց լեզվի ուսուցիչ՝ ***Լիդիա Հայրապետյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ